

ՊՐՈՓ. Հ. ԳԱՌԻԵԼՅԱՆ

ՍՏՈՒԳԱՅԻ Է 1961

# ԱՄԱՌԱՅԻՆ ԼՈՒԾԵՐԻ

ՊՐՈՓԻԼԱԿՏԻԿԱՆ

Յ Ե Վ

ԹԵՐԱՊԻԱՆ



Հրատարակութիւն Առօրեկումարի Սան-լուս բաժնի

Կիրովական

1938 թ.

II  
24313  
1855



## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մի խումբ յերիտասարդ բժիշկներ դիմել են ինձ, խնդրելով, վոր յես տպագրության հանձնեմ իմ ղեկուցումը, վորը կարգացել էմ անցյալ տարվա՝ լուծերի դեմ պայքարի կապակցութեամբ գումարված մանկաբուժների կոնֆերանսիայում:

Յերիտասարդ բժիշկների այդ դիմումն ինքնին ցույց է տալիս, վոր մեր բժշկական հասարակայնութիւնը շահագրգռված է այն մեծ սոցիալական պրոբլեմով, վոր ներկայացնում են մարսողական ուղիների խանգարումները մանկական վաղաժամ հասակում, վոր նա ցանկանում է ամառային լուծերի պայքարի ճշգրիտ պատկերացում ունենալ լուծի պրոֆիլակտիկայի հարցերի մասին, վոր նա կամենում է լիովին տիրապետել լուծերի ուսցիոնալ թերապիային, վոր նա ուզում է տեղյակ լինել այն բոլոր դիետետիկ նորութիւններին, վորոնք գիտութեան վերջին նվաճումների արդիունքներն են:

## Հ Ե Ղ Ի Ն Ա Կ



## ԴԻՍՊՈԶԻԿԱԿԱՆ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱՆ

Հասարակ յեւ տոքսիկ դիսպիպսիայի պրոֆիլակտիկան ընդհանուր եւ և միեւնոյնը:

Տոքսիկ դիսպիպսիան շատ հաճախ հասարակի շարունակությունն եւ հասարակը փոխվում եւ տոքսիկի: Այդ անցումը յերբեմն նկատելի չեւ դաւայն ժամանակ, յերբ հասարակը տեւական եւ, իսկ յերբեմն եւ աննկատելի՝ յերբ հասարակը կարճատեւ եւ թույլ:

Պաթոգենետիկորեն յերկուսն եւ կադմում են մի պրոցեսս, յերկվոյթների մի շղթա:

Տարբերությունը յերկուսի միջեւ քանակական եւ, քանակը հասնելով վորոշ չափի, դառնում եւ վորակ: Այդ եւ պատճառը, վոր յերկու դիսպիպսիաների պրոֆիլակտիկան հանդում եւ միեւնոյն դրույթին:

Պրոֆիլակտիկայի առաջադրանքը՝ ընդհանրապես բոլոր պրոֆիլակտիկ միջոցառումների նպատակը, կարելի չեւ բնորոշել հետեւյալ կերպ՝ ստեղծել կենցաղային այնպիսի պայմաններ, վորպեսզի հմարավոր լինի մտեկան նամաք ապահովել կամեցած վոր սքնւնդ, խելացի խնամք և նպատեկամաքումս ռեժիմ, նրա հասակին, նրա անհատական կոնստիտուցիոնալ առանձնահատկություններին համապատասխան:

Այդ նպատակի համաք, իհարկի, անհրաժեշտ եւ դարնան մոտ, մորելիզացիայի յենթարկել Մոր և Մանկան Պահպանության բուժ. պրոֆիլակտիկ հիմնարկները, կոնսուլտացիաները, մսուրները, պատրոնաժը, տնային ոգնության բժիշկներին, դպրոցական բուժ. անձնակազմին:

Այդ նպատակի համաք անհրաժեշտ եւ նաեւ աշխատավորության մեջ հարկավոր լայն հետաքրքրություն դարթեցնել դեպի

մանուկների մահացության նշանավոր ֆակտորաներից հզորագույնը — լուծհորը:

Զմռան ընթացքում նախորոք պետք է հաշվի առնվեն այն մանուկները, վորոնց առանձնապես սպառնում է ամառային լուծը. հաշվառման են յենթակա նաև բոլոր հիպոտրոֆիկները, ատրոֆիկները, բոլոր նրանք, վորոնք ծանր ժառանգականություն ունեն, վորոնք ինֆեկցիաներ են տարել, նրանք, վորոնք սովորում են կենցաղային բացառիկ վատթար պայմաններում:

Ինքնին հասկանալի չէ, վոր առողջապահական բաժինները պետք է կազմ ու պատրաստ ունենան բավարար չափով բուժական մահճակալների ցանց:

ՍՆՈՒՄ.— Պրոֆիլակտիկ միջոցառումների շարքում առաջին և գլխավոր տեղը բռնում է սնումը, սննդի վորակը, քանակը, ինչպես նաև սնման ռեժիմը, ընդմիջումները՝ գերսնումից ու թերսնումից խուսափելու համար:

Այստեղ առանձնապես պետք է շեշտել բնական սնունդը — կնոջ կաթը. նա ընդհանրապես բացառիկ արժեքավոր սնունդ է. արժեքն առավելապես մեծ է վերոհիշյալ կարգին պատկանող մանուկներին համար:

Կնոջ կաթն, իբր սնունդ, պետք է դրվի ամենաառաջնակարգ, ամենաբարձր տեղը թե վորպես մանկան համար հարազատ սնունդ, թե վորպես պրոֆիլակտիկ միջոց:

## Կ Ա Յ Ն Ա Շ Ա Վ Ա Ք Ա Կ Ա Յ Ա Ն

Վերոհիշյալից բխում է այն նշանավոր դերը, վորն ունի կատարելու կնոջ կաթի հավաքակալանը, նա հանդիսանում է վերին աստիճանի գնահատելի, եֆեկտիվ, պրոֆիլակտիկ միջոց:

Սրանից պարզվում է նաև այն ֆնասը, վորն ստացվում է, յերբ մեր կոնսուլտացիաներում ու մսուրներում վաղաժամ, 2-3 ամսական յերեխաներին, նրանց մայրերի աշխատանքի յեղած ժամանակ, արհեստական լրացուցիչ սնունդ են նշանակում:

Այդպիսի դեպքերում պետք է կերակրել կթած, սառը տեղ պահած մայրական կաթով:

Ինչ վերաբերվում է իբրեւ Ֆիդիոլոգիական պահանջ 5-6 ամսական յերեխաներին ամառը արվելիք լրացուցիչ սննդին պետք է նկատի ունենալ և հատկապես հաշվի առնել, վոր յերբ ամառն է գալիս, առանձնապես խորհուրդ է տրվում գործա-

ծելու թիթու կաթնախառնուրդները, վորոնցից զերադասութիւնը պատկանում է մածոնին, սպասին, ժածիկին, թանին և ուրիշ կաթնամթերքներին:

## Ձ Ր Ի Ն Շ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Կարեւոր է ընդգծել ջրի խոշոր ֆիզիոլոգիկ նշանակութիւնն իբրեւ լարոֆիլակտիկ միջոց. ջրի պլառնաչափ, սիստեմատիկ գործածութիւնն ոժանդակում է ջրի այն մեծ կորստի վերականգմանը, կորուստ, վորը տեղի յետնենում մաշկային շնչման (պերսպիրացիայի) շնորհիւ: Ջրի փոխանակութեան հավասարակշռութիւնը բարձրացնում է որգանիզմի դիմադրողականութիւնն ինֆեկցիաների հանդեպ և ուժեղացնում է ներվային սիստեմի տոնուսը:

Դիսպէպսիաներն ամուսն սկզբին և ամառվա ընթացքում տոնանձնապես հաճախակի յեն դառնում: Այս հանգամանքը վորոշակի ցույց է տալիս, վոր կապ կա մի կողմից կլիմատիկ ֆակտորի, տոթի, մյուս կողմից հիվանդութեան ծագման միջիւ:

Դա առաջանում է նրանից, վոր տոթը գերջերմացնում է (перегревает) մանկանը: Գերջերմացումն առանձնապես հեշտանում է մանկան անատոմիֆիզիոլոգիկ հատկութիւնների շնորհիւ:

Մանուկն ունի փոքր մասսա, մեծ մակերես, վորի հետեւում ջերմականոնավորումն անկատար ու թերի յետնում: Այդ է պատճառը, վոր մանուկն ավելի շուտ է ջրադրկման յետնութարկում, իսկ ջրադրկումն առաջ է բերում ացիդոզ թունավորում:

Եքսպիրիմենտալ տվյալները ցույց են տալիս, վոր գերջերմացման ժամանակ յերեւան են դալիս մի շարք ֆիզիոլոգիկ փոփոխութիւններ. այն է՝ ստամոքսի և աղիքների մոտորիկայի խանգարում, ստամոքսային հյութի անկում, նյութերի փոխանակութեան ընդհանուր փոփոխութիւններ՝ հակումով դեպի ացիդոզ:

Գերջերմացման հետ սերտ կապ ունի նաեւ աննպատեկահարմար հազուստը. յետի մանկանը շատ են փաթաթում, դրանով, իհարկե, նպաստում են գերջերմացմանը: Բարակ հագուստն ամուսնը թարմացնող է, հաստ հագուստը թմրացնող է: Այստեղից պարզ է, թէ ինչպիսի մեծ նշանակութիւն ունի ռացիոնալ հագուստի պրոպոգանդն ամառ ժամանակ:

Զերմացումի հետ կապված և նաև ջրային մանիպուլիացի-  
տների, լողաբանների, ջրային շփումների, ջրային գուշերի  
հարցը:

Այդ մանիպուլիացիաները, բացի նրանից, վոր մաքրում են  
մաշկը, զրանով նպաստում են մաշկային շնչման, նրանք նախվ  
գովացնում են մանկանը, բարձրացնում են ներվային սխտեմի  
տոնուսն, աշխուժություն են բերում մանկանը:

## Ս Ն Ն Դ Ի Մ Ա Ք Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ինչ խոսք, վոր սննդի մաքրությունը շատ կարևոր նշա-  
նակություն ունի: Այդ նշանակությունն առանձնապես խոշոր և  
ամուսնը, յերբ տոթի ազդեցության ներքո սննդամթերքներն  
տրագորին քայքայվում են, յերբ նրանք ավելի հեշտությամբ  
են յնթարկվում ինֆեկցիաների:

Ուստի սննդամթերքների պաշտպանությունը փոշուց, կեղ-  
տից և ճանճերից դառնում և մի շատ կարևոր պրոֆիլակտիկ  
միջոց: Մանուկն ի ընե անմաքրասեր և. նա ոիրում և ամեն  
բան, ամեն իր, խաղալիք, իրեն թաթիկներով տանել բերանն,  
ապա ուրեմն ձեռքերի, իրերի խաղալիքների կրկնակի լվացումը  
նմանապես գուրկ չե պրոֆիլակտիկ նշանակությունից հենց լու-  
ծերի տեսակետից:

## ՀԱՍԱՐԱԿ ԴԻՍՊԵՊՍԻԱՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Թերապիայի առաջնագույն խնդիրը կայանում և նրանում,  
վոր խափանվի, բակտերիաների ստորին աղիքներից դեպի վեր  
բարձրանալը. յերբ bacterium coli-ի խմբի բակտերիաները վեր են  
բարձրանում, այնտեղ առաջանում և ածխաջրերի խմորում, յե-  
րեվան են գալիս թթուներ, վորոնք զոգոում են լորձաթաղան-  
թըն, առաջացնում են աղիքների պերիստալտիկան: Բացի b.  
coli-ի խմբից, ալտիվանում են նաև մի շարք ուրիշ բակտերիա-  
ներ՝ b. lactis aerogenes, proteus, perfringens, Enterococcus,  
staphylococcus և այլն:

Առաջին դեպքերում, դեր են խաղում նաև պարատիֆոդ  
և դիզենտերիկ միկրոբները:

Այդ խնդիրը լուծելու համար և, վոր մենք, նախ և առաջ,  
սննդից բեռնաթափում ենք մարսողական օրգաները, սահմանա-  
փակում ենք սնումը, նշանակում ենք ջրային կամ թեյի դեհ-

տա, տալիս ենք լուծողական (Ol. Ricini), թերապիայի յերկրորդ խնդիրը՝ դա քննիչների խախտված հիգիենամիկայի վերականգնումն է։ Այդ նպատակին է ծառայում նախ կորած ջրի լրացումը և ապա այնպիսի սննդի ընտրությունը, վորը դուրամարս է, չի պարունակում իր մեջ ածխաջրերի մեծ քանակություն, վորոնք հեշտությունը խմորվում են և այնպիսի սնունդ, վորն իր մեջ չի պարունակում մեծաքանակ ճարպային նյութեր, վորոնք մարսողության վրա ճնշող ազդեցություն ունեն։

Լավագույն սնունդն այդ տեսակետից կնոջ կաթն է։ Այդ կաթը յեվս պետք է սկզբում տալ չափավոր, վորոշ ընդմիջումներով և զգուշությամբ ավելացնելով քանակը, հաշվի առնելով հիվանդի անհատական տարողության չափը։

Կաթից բացի, խորհուրդ է տրվում գործածել՝ թան, սպիտա-յին կաթ, լորձային յեվուսներ, թթու խառնուրդներ, վորոնց շարքում առաջին տեղը գրավում են մածոնն ու սպաղը։

Այստեղ պետք է շեշտել, վոր խառնուրդներին թթու ռեակցան նպաստում է ստամոքսա-աղիքային ֆերմենտների ավելի յիռանդուն գործունեությունը և միեկնույն ժամանակ թթու խառնուրդներն ավելի դուրամարս են, հասարակ դիսպեպսիայի ժամանակ սիստեմատիկորեն կիրառվում են կոմպրեսներ, հոգնասիւր, վաննաներ։

## ՏՈՒՄԻԿ ԴԻԱՊԵՊՏԻԱՅԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Տոքսիկ դիսպեպսիայի բուժման հիմնական խնդիրն է ուսյաբարել ինտոքսիկացիայի դեմ։

Ինտոքսիկացիան հետեւանք է չորացման (էքսիկեզի) չորացումը հետեւանք է ջրազրկման (անհեդրեմիայի)։ Ուրեմիան հրաժեշտ է որդահիլզմին ջուր տալ՝ անհրաժեշտ է վերականգնել քնիջի-ջուրն իր մեջ պահելու, իր հետ կապելու ընդունակությունը, վորպեսզի վերականգնվի նյութերի կանոնավոր փոխանակությունը։

Դեզինտոքսիկացիան հետ մղելու առաջին քայլը, ջրային դիետան է, վորի տեվողությունը տարբեր դեպքերում պիտի սահմանվի տարբեր չափով՝ 6-8-12-24 ժամ, նայած ինտոքսիկացիայի ուժգնությանը, խորությանը, նայած հիվանդի բնակազմությանը (կոնստիտուցիային), նայած նրան, թե հիվանդը եվտրոֆիկ է, հիպոտրոֆիկ, թե ապրոֆիկ։ Ջրի մատակարարու-

մը կատարվում է տարրեր յեղանակներով—per os, per klysmam, կաթիլային հոգնաներով, յինթամաշկային, ներվենային, ինտրապերիտոնեալ ներարկումներով:

Յերբ ինտոքսիկացիան չքանում է, յերբ գիտակցությունը դառնում է հստակ, մաշկն ստանում է իր սովորական գույնը, դադարում է «մեծ շնչումը» («большое дыхание») և փախուժըն, այդ դեպքում հանդես է գալիս թերապիա տեսակետից յերկրորդ խնդրը՝ նպատակահարմար դիետայով պահպանել ըստեղծված նոր կացությունը, վորպեսզի բջիջային պրոտոպլազմայի վերականգնված ունակությունները նորից չխախտվին:

Մնումը պետք է տանել վերին աստիճանի դգույշ, սննդի քանակը պետք է ավելացնել աստիճանաբար, բաժինները (պորցիաները) պետք է տալ մանր, սկզբում կթած սառցրած կաթ որվա մեջ 10 անգամ:

|                                |         |                |              |
|--------------------------------|---------|----------------|--------------|
| Առաջին որը միայն ջրային դիետա, |         |                |              |
| Յերկրորդ որը կնոջ կաթ          | 10,0—10 | անգամ որվա մեջ |              |
| Ֆուսյած ժամանակը ջուր          |         |                |              |
| Յերրորդ որը                    | » »     | 15,0—10        | անգամ և ջուր |
| Չորրորդ որը                    |         | 25,0—10        | » »          |
| Հինգերորդ որը                  |         | 30,0—10        | » »          |

Մենդից բացի, կարեւոր տեղ է գրավում խնամքը, վորի նպատակն է մանկանը դնել մաքսիմալ նպաստավոր պայմաններում, վորոնք մեծագույն չափով դուրացնում են մանկան պայքարը հիվանդության դեմ:

Այդ ուղղությամբ պետք է նշել ողի մաքրությունը—բնական ռանի ողափոխությունը, սպիտակեղենի հաճախակի փոխումը, ձերքերի մաքրումն, ամանեղենի և բոլոր իրերի մաքրությունը, հիվանդի դրքի փոխումը, մաշկի, բերանի, աչքի խնամքը:

Դեղորայքն իրենց տեղն ունեն՝ լուծողականն անհրաժեշտ է. լավագույնն է՝ օլ. Ricini:

Ախտահանիչներն ավելորդ են. սրտային միջոցները շատ դեպքերում ավելորդ չեն, նրանցից կարեւորն է՝ Coffein-ը լավ է glucoza-ն 6<sup>0</sup>/<sub>0</sub>—8<sup>0</sup>/<sub>0</sub>—10<sup>0</sup>/<sub>0</sub> Ringer-ի հեղուկի հետ, կամ առանց նրան.

Կարելի չէ կիրառել և հոգնաներ. անգուսպ փախումներ ժամանակ դիմում են ստամոքսի լվացման 0,5<sup>0</sup>/<sub>0</sub> Natri bicarbonici լուծույթով:

Յնցումների ժամանակ կարելի չէ գործածել luminal:

Հետազոտում յերբ առողջացումը դանդաղում է, կարելի չէ կիրառել ֆերմենտթերապիա-ac. mur. dil., pepsin կամ հեմոֆերապիա 15 սմ<sup>3</sup> 20 սմ<sup>3</sup> արյուն միանվազ կամ մի քանի անգամ:

## ԿՈԼԻՏՆԵՐԻ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱՆ ՅԵՎ ԹԵՐԱՊԻԱՆ

Կոլիտների հարուցիչները բազմաթիվ են՝ դիզենտերիկ խմբին պատկանող միկրոբներ, պրոտոդոաններ (*Amoeba*, *Iamblia balantidium coli*), պարատիֆոզ և այլ միկրոբներ:

Պրոֆիլակտիկայի առաջնագույն խնդիրն է՝ ընդհանուր սանիտարական միջոցներով վորքան կարելի չէ խափանել ինֆեկցիաների աղբյուրները, վոր ինֆեկցիաները չ'առաքածվեն, իսկ դրա նախապայմանն ընդհանուր մաքրությունն է, սննդամթերքի պաշտպանությունը կեղտից, փոշուց, ճանճերից:

Այդ տեսակետից կարելվոր է հիվանդի մեկուսացումը, բացիլակիրների հսկողությունը, նրանց հաշվառումն ու կարելույն չափի բուժումը:

Յերկրորդ կարեվոր պրոֆիլակտիկ միջոցառումը կանոնավոր սնումն է:

## Կ Ո Լ Ի Տ Ն Ե Ր Ի Թ Ե Ր Ա Պ Ի Ա Ն

Ներկայումս բոլոր գիտական հեղինակությունները կոլիտների ժամանակ միաբերան խորհուրդ են տալիս լիարժեք սնունդ տալ:

Լիարժեք սնունդն այժմ փոխարինում է այն կիսասով գիետային, վոր առաջ գոյություն ուներ կոլիտների բուժման գործում:

Լիարժեք սննդի նպատակահարմարությունը հիմնվում է հետևյալ դրույթի վրա՝ կոլիտի ժամանակ համարյա մենք միշտ ունենք միայն հաստ աղիքների ախտահարում, մաքսողությունը մեծագույն չափով տեղի չէ ունենում հաստ աղիքից դուրս: Հին դիետան սահմանափակ սննդով, խնայող դիետան, առաջացնում էր որդանիզմի ընդհանուր թուլացում, ուժերի անկում, նրա իմունիտետի իջեցում, մի հանգամանք, վորը նպաստում էր պարենաերալ, թարախային բորբոքումներին և յերկարացնում հիվանդի առողջացումը:

Գլխավոր ուղեցույցն այս կամ այն սննդի ընտրության

միջ հիվանդի ախորժակն և և վոչ թե կլանքի այս կամ այն վորակը: Նախ ընտրելի յե այն սնունդը, վորն իր մեջ քիչ քանակութամբ խարամներ և (шлакн) պարունակում:

Ախորժակը վոչ միայն սննդի ընտրության, այլ և քանակի վորոշման ուղեցույցն և:

Չափադանց ոգտակար և դործածել այնպիսի թթու խառնուրդներ, ինչպիսիք են մեր մածոնը, կիֆիրը, բուլգարական յաղուրտը. նրանք փոխում են աղիքների ֆլորան, նպաստում կաթնաթթվային միկրոբների զարգացման, իսկ վերջինները իրենց հերթին դուրս են վանում ուրիշ պաթոգեն միկրոբներին: Այսպիսով՝ վերոհիշյալ խառնուրդներն ոժանդակում են որդանիզմին նրա աղիքներում բակտերիալ բնակչության ավելի հաջող դասավորում կատարելու:

Խնձորային դիտան վերջին տարիներում կոլիտների բուժման մեջ քաղաքացիական իրավունք և ստացել:

Այն հասակում, ուր կարելի յե այն դործածել, խորհուրդ և տրվում կարճ ժամանակ նույնպես գործադրել:

Չափավոր քանակութամբ վիտամիններն ոգտակար ներգործություն ունեն:

## Դ Ե Ղ Ո Ր Ա Յ Ք Ա Յ Ի Ն Բ Ո Ի Ժ Ո Ի Ս

Դեղորայքային բուժման մեջ առաջին տեղը զբաղում են լուծողականները *Ol. Ricini* մինչև մեկ յերկու տարեկան և *Ol. Ricini, Natri sulfur, Magn. sulf.* ավելի բարձր տարիքի յերեխաների համար:

Լուծողականը դուրս և մղում խառամները, կանոնավորում ապաստիկ սիմպտոմները:

Մեծահասակ մանուկների համար թույլատրելի յեն նարկոտիկները, *Opium, Beladonna, Atropin.*

Կոլիտի սկզբին կապոյ (*adstringens*) և ախտահանիչ (*desinfeciens*) դեղորայքի կիրառումը լավ է:

Այդ միջոցները կարելի յե գործադրել հետապայում, վորովհետև նրանք նախ սահմանափակում են աղիքներում տեղի ունեցող խմորումն ու նեխումն, ապա նրանք միանալով ապիտալին թյունավոր նյութերի հետ անլուծելի նյութեր են կազմում:

Ջեղոցիներն (грелки) ու կոմպրեսները սիմպտոմատիկ նշանա-  
կություն ունեն:

Մեծ նշանակություն ունի նաև մաշկի խնամքը:

Լավ և սպիտակեղենի հաճախակի փոփոխումը, նրա ախտա-  
հանումը:

## Ա Մ Ի Ո Ւ Ա Յ Ի Ն Դ Ի Ջ Ե Ն Տ Ե Ր Ի Ա

Կոլիաների շարքից առանձին ուշադրության արժանի յե-  
ամիոբային դիզենտերիան. նրա կանխարգելիչ միջոցները հե-  
տեվյալներն են:

ա) Խիստ հսկողություն ջրի մաքրությանը:

բ) Սննդամթերքների պաշտպանությունը փոշուց, կեղտից,  
ճանճերից:

գ) Ցիտակիրները հայտնաբերումն ու նրանց դիսպանսե-  
րիզացիան, ցիտակրությունը վոչնչացնելու նպատակով:

դ) Ենդեմիկ վայրերում ձեռքերի, ատամների լվացումը  
յեռացրած ջրով:

Թերապիա-լուծողական՝ Ol. Racini, Natri, Magn. Sulfur,  
Calomel

Ապեցիֆիկ բուժում-հնդագույն թերեպեվտիկ միջոց-բրա-  
դիլիական և՛ 17 դարում այդ առաջարկել են Մարկ Գրաֆ և  
Պիդոնը. դա Radix ipecacuanhae-ն է:

Հիշյալ հեղինակները գործ էյին ածում Radix ipecacuanha-ն  
հետեվյալ գրությամբ՝ jnt. r. ipec. ef 4,0:160,0. Նրանք չափա-  
հասներին տալիս էյին որը 80 սմ. 3:

Այժմ կիրառվող emetinum Hydrochloricum ipecacuanha-ի  
կոմպոնենտն է. նրա սպեցիֆիկ ազդեցությունն սուսնախիբի  
և Վիդերը:

Առաջին անգամն իբր բուժիչ միջոց կիրառել է Ռոջջերսը  
1913 թվին:

Ըստ Ջախարիդիսի համարների կիրառումից հետո մահացու-  
թյունը դիզենտերիայից ընկել է 52 0/0-ից մինչև 12 0/0-ի:

Ըստ Ռոջջերսի մահացությունն ընկել է 34 0/0-ից մինչև 0,  
իսկ հիվանդության տեվոդությունն իջել է 16,4 որից մինչև 7,2 որ:

Սակայն համարնը ներգործում է ամիոբայի միայն վեգե-  
տատիվ ձեվերի վրա, ցիտների վրա նա ազդեցություն չունի:

Եմեաինից բացի մի քանի հեղինակներ գործ են անում և Neosaluarsan:

Համառուգի արուպինատիտուտի հոչակալոր զխոնական Մյուլենան առաջարկել և մի ուրիշ միջոց-jatren, վորն արգելա-  
կում և ամիորային անցնելու ցիտային ձեվին, վորը խանգա-  
րում և ամիորաների բազմացմանը Jatren-ն իր մեջ պարու-  
նակում և 28 %, Jodi, վորը jatren-ի ներգործող կոմպոնենան և,  
նա լուծվում և տաք ջրի մեջ, կիրառվում և առավելապես քրո-  
նիկ դեպքերում:

Վորովհետև հմետինը կոմուլյատիվ հատկություններ ունի,  
սովորաբար կիրառում են 4-5 որ, որը մեկ անգամ ներարկում,  
ապա դադար տալիս: Մանավանդ վոր հմետինը ներգործում և  
վեգետատիվ ձեվերի վրա: Վերջիններս ճիշտ այդ ժամկետին  
չքանում են:

Հասակավորների համար լավագույն թերապևտիկ դոզան  
0,1. տասներկու տարեկանի համար՝ 0,05. 6 տարեկանի համար՝  
0,025. 3 տարեկանի՝ 0,012. մեկ տարեկանի 0,01. jatren դոզան  
peros՝ 0,1. 0,15. 0,2. 0,3-3 անգամ:

## Բ Ո Ւ Ժ Մ Ա Ն Ս Խ Ե Մ Ա Ն Ե Ր

1) 3-5 որ հմետին ներմկնային. դադար 14 որ. նորեն 3-5  
հմետին և դադար: Այդպես շարունակել մինչև ամիորայի ան-  
հետանալը.

2) Jatren 8-10. 14 որ.

դադար 14 որ.

նորեն 5 որ.

բացի հմետինից յատրենից գործ և անվում և նորագույն  
ախտահանիչ Rivanol

Rivanol<sup>c</sup> pes os /կիրառվում և հետևյալ ձևով.

Rp. Emul<sup>s</sup> Ricin 100,0

Rivanol 0,015

DS. Թեյի, անուշի գլալով որը 6 անգամ

Rivanol-ը կարելի չի գործադրել և Per Klysmam.

դուրս և գրվում լուծույթն այսպես. Sol. Rivan 1.0:10,000

# Բ Ա Յ Ի Լ Ա Ր Դ Ի Զ Ե Ն Տ Ե Ր Ի Ա

Իդուր չե, վոր գերմանացիները դիզենտերիան կոչում են՝ kotinfektion-կղանքային ինֆեկցիա, սրա վարակը տարածվում է կղանքի մասնիկներով, տարածվում է կամ շփման, կամ թե աղտոտված խմելիքի, ուտելիքի միջոցով:

Բացի ընդհանուր առողջարար միջոցառումներից, բացիլար դիզենտերիայի պրոֆիլակտիկան պահանջում է, վոր հիվանդները հայտնաբերվեն և մեկուսացվեն:

Խրախուսելի և ապագա խոստացող միջոց պիտի համարել ակտիվ իմունիզացիան, ըստ Շիգայի, կամ վակցինացիան peros ըստ բեզրոդկայի Դիզենտերիայի դեմ պայքարի տվյալ ձևվորը մեծ ուշադրություն չեն գրավում, հարկավոր հետաքրքրություն չեն առաջացնում:

Թերապիան՝ նախ պետք է հիշել շիճուկային թերապիան: Սրա նպատակն է չեղոքացնել աղիքներում առաջացող թուչնեքը, պաշտպանել վաղուսիմաթատիկ ներվային սխտեմը տոքսինների փնտաբար ազդեցությունից:

Հակադիզենտերիկ շիճուկի ազդեցությունն ալյանքան ավելի է ֆեկտավոր է ինչքան, վաղաժամ է կիրառվում նա:

Շիճուկի դոզումը հետևյալն է՝

մինչեւ 3 տարին 25 սմ<sup>3</sup>

մինչեւ 7 տարին 75 սմ<sup>3</sup>


7-ից բարձր 100—150 սմ<sup>3</sup>:

Ցերեմն հարկ է լինում, շիճուկի առաջին ներարկումից մեկ կամ, յերկու օր անց, նորից ներարկել յեթե բուժիչ էֆեկտը չի նշմարվում առաջին ներարկումից:

Բացիլար դիզենտերիայի դեխտոթերապիան նույնն է, ինչ վոր առհասարակ կոլիտների ժամանակ:

Դեկորալքային բուժումն է լուծողական, սրտային, կապող ախտահանիչ, շատերը նույնիսկ եմիտին, յատրեն, հիվանդ են կիրառում:

Մանկան ստալոքուս-ալիքային հիվանդություններն ալյապիսի խոշոր չափեր են, վոր պահանջվում է ամենասուր ուշադրություն, դեպի նրանց պրոֆիլակտիկան և բուժումը:



[054.]

565

ЦЕНА

11  
24313

12167



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0001972